# ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
# ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 963-Ա « 20 » փետրվարի 2026թ.

ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ՏԱՐԱԾՔՆԵՐՆ ԱՃՈՒՐԴՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Երևան քաղաքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 23-ի հ.463-Ն և Երևանի քաղաքապետի 2018 թվականի դեկտեմբերի 26-ի հ.3757-Ա որոշումները, Երևանի քաղաքապետարանի պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գույքերի հրապարակային սակարկություններով կազմակերպման և անցկացման հանձնաժողովի կողմից 06.02.2026թ. արձանագրությունով տրված առաջարկությունները.

1. Երևան համայնքի սեփականություն համարվող տարածքները ներկայացնել վարձակալության իրավունքով տրամադրման աճուրդի՝ համաձայն սույն որոշման հավելվածով հաստատված ելակետային տվյալների, մեկնարկային գների:

2. Հանձնարարել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի լրատվության վարչությանը՝ ներկայացված գույքերի մասին տեղեկատվությունը տարածել մամուլով և զանգվածային լրատվության այլ միջոցներով:

3. Հանձնարարել Երևան քաղաքի սեփականություն համարվող գույքն օգտագործման տրամադրելու և օտարման աճուրդը և մրցույթը կազմակերպող ու անցկացնող հանձնաժողովին՝ ապահովել սույն որոշմամբ հաստատված վարձակալությամբ տրամադրման ենթակա գույքերի վերաբերյալ հրապարակային

ծանուցման հրապարակումը և սահմանված կարգով ապահովել աճուրդի անցկացումն ու արդյունքների ամփոփումը:

4. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Ա.Փամբուխչյանը:

**ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**

Հավելված
Երևանի քաղաքապետի
20.02.2026թ.
հ. 963-Ա որոշման

ՑԱՆԿ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔՆ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ ԱՃՈՒՐԴԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՂ ՈՒ ԱՆՑԿԱՑՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՍՏԱՏՎԱԾ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԱՃՈՒՐԴԻ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ԳՈՒՅՔԵՐԻ

| Հ/հ | վարչական շրջանը | հասցեն | շինության նշանակությունը և տեսակը՝ ըստ վկայականի | Շենքի (շինության) մակերեսը /քմ/ | Հողամասի մակերեսը /քմ/ | մեկնարկային գինը 1 ամսվա համար /ՀՀ դրամ/ | վարձակալության ժամկետը և օգտագործման նպատակը |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Կենտրոն | Տերյան փողոցի հ.44 | վարչական շենք /նկուղ/ | 531.7 | --- | 2.390.000 | 5 տարի՝ որպես ճաշարան |
| 2 | Նոր Նորք | Գայի պողոտա հ.19 | Վարչական շենք | 25.77 /ընդհանուր՝ 12.09/ | -- | 111.353 | 3 տարի՝ որպես գրասենյակային տարածք |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 3 | Նոր Նորք | Գայի պողոտա h.19 | Վարչական շենք | 21.78 /ընդհանուր՝ 12.09/ | -- | 97.388 | 3 տարի՝ որպես գրասենյակային տարածք |

**ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝** **ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**